| | |
|---|---|
| Դիլիջան | Յարութիւն քհնյ. Տէր Գէորգեան |
| Դուշէթ | Աղէքսանդր քհնյ. Տէր Յարութիւնեան |
| Ջաֆաքալա | Յովհան քհնյ. Ատովմեան |
| Թելաւ եւ շրջակայքում | Գէորգ ա. քհնյ. Տէր Սարգսեան |
| Թիֆլիս | Ղազար ա. քհ. Պալիգալֆայեան եւ Սարգիս ա. քհ. Աղաջանեան |
| Մեծ Ղարաքիլիսա եւ շրջակայքում | Արսէն քհնյ. |
| Սղնախ | Սարգիս քհնյ. Տէր Ստեփաննոսեան |
| Սուրամ | Յովսէփ քհնյ. Առիւծեան |
| Քութայիս | Դաւիթ ա. քհնյ. Եարալեան |

Ղարաբաղի թեմ.

| | |
|---|---|
| Նուխի եւ շրջակայք. | Գրիգորիս Վարդապետ |
| Շուշի եւ շրջակայքում | Արիստակէս Վարդապետ Սեդրակեան |

Շամախու թեմ.

| | |
|---|---|
| Բագու | Թադէոս ա. քահ. Բուդաղեան |
| Դերբենդ | Արսէն քհնյ. Տ. Ղազարեան |
| Ղուբայ | Աւագ քհնյ. Աւշարեան |
| Շամախի եւ շրջակ. | Համազասպ Վարդապետ |

| | |
|---|---|
| Դավրէժ | Գրիգոր Արքեպիսկոպոս Մուշեղեան |
| Զմիւռնիա | Մելքիսեդեկ Եպիսկոպոս Մուրադեան |
| Թէհրան | Նէրոն Աղա Մասուճեան |
| Կալկաթայ | Ստեփաննոս Աղանուրեան |
| Կ. Պօլիս | Պօղոս Վարդապետ Խօլոամեան |

---

## ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ.

Առաջիկայ 1880 թուին «Արարատ» ամսագիրը սկսելով իւր երեքտասաներորդ շրջանը հրատարակվելու է սովորական ուղղութեամբ և պայմաններով, միայն իւրաքանչիւր ամսատետրակը 3 տպագրական ամբողջ թերթից (վեց մամուլից) բաղկացած։ Ցանկալի է իհարկէ, որ «Արարատի» համակրողներն և ստորագրողներն բազմանային, մանաւանդ աչքի առաջ ունենալով այն օգտաւէտ հանգամանքն, որ «Արարատը» կպահպանէ Ս. Աթոռիս ընդարձակ տպարանը և գլխաւորապէս սա կհոգայ Ս. Աթոռիս բոլոր հրատարակութիւնների ծախսերը։

---

1880 թուի Օրացոյցում տպագրական սխալմամբ ապրիլի 26 ին Յովհաննէս Մկրտչի գլխատման շաբաթ օրվան վերայ խաչանիշ է դրված։ Նաև նոյեմբերի 22 ին պիտի լինի «սրբոց հայրապետացն Գրիգորի սքանչելագործի եւ Նիկողայոսի եւ Միւռոնայ եպիսկոպոսի», հետեւաբար առաջին ս. Նիկողայոս սքանչելագործ հայրապետի անունը սխալմամբ դրված է եւ պիտի տօնվի դեկտեմբերի 6 ին, ինչպէս որ նոյն օրն եւս դրված է։

---